Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի մարտի 23-ի N 10 - 1 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

_____ Դ. Ռ. Գալոյան

23 մարտի 2022 թ.

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը մշակված է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) որակի ներքին ապահովման հայեցակարգի հիման վրա՝ ելակետային դրույթների պահպանմամբ:

2. Ընթացակարգով սահմանվում է համալսարանում իրականացվող դասընթացներից (ներառյալ դասավանդողներից, ուսումնառության նյութերից և գնահատումից) ուսանողների բավարարվածության գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

3. Համալսարանում դասընթացի իրականացման գնահատման համար ուսանողական հարցման անցկացման նպատակներն են՝

1) բարելավել կրթական ծրագրերի որակը՝ դասավանդման, ուսումնառության և գիտելիքի գնահատման գործընթացների վերլուծության միջոցով,

2) կիրառել և զարգացնել կրթության ուսանողակենտրոն սկզբունքը,

3) աջակցել որակի ներքին ապահովման համակարգի գործարկմանը և որակի ապահովման շրջափուլում ուսանողների մասնակցությանը,

4) նպաստել կրթության որակի շարունակական բարելավմանն ու համալսարանում որակի մշակույթի զարգացմանը,

5) վերհանել ուսանողների կարիքները և բարելավել համալսարանի գործունեությունը,

6) ապահովել բազմակողմանի տվյալների ժամանակին հավաքագրումը և տվյալների բազայի ամբողջականությունը:

4. Սույն ընթացակարգը հաստատում, ընթացակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում համալսարանի գիտական խորհուրդը՝ համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգի:

## 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

5. Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցումն անցկացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո՝ հաջորդող կիսամյակի առաջին երկու ամսվա ընթացքում:

6. Ավարտական կուրսերի ուսանողների հարցումներն իրականացվում են ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունից առաջ:

7. Ուսանողական հարցումներն անանուն են, կազմակերպվում են Moodle հարթակում համալսարանի որակի ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինների կողմից:

8. Ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր դասընթացի համար սույն ընթացակարգի հավելված համարվող դասընթացի իրականացման գնահատման հարցաթերթերով (հավելվածներ N 1, N 2, N 3):

9. Ավարտական կուրսերի ուսանողների շրջանում իրականացվում է ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման գնահատում՝ սույն ընթացակարգի հավելված համարվող ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի կատարման գնահատման հարցաթերթերով (հավելվածներ N 4, N 5):

10. Տվյալ կիսամյակի ավարտին որակի ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինները Moodle հարթակում յուրաքանչյուր մասնագիտության ակադեմիական խմբի համար ձևավորում են դասավանդողների և սեմինարավարների հարցաթերթիկները ներառող հարցման մոդուլները և սահմանված ժամկետում հասանելի դարձնում ուսանողական անանուն հարցման համար:

11. Հարցման մոդուլները անանուն հարցման համար հասանելի են 1 ամիս:

12. Ուսանողական հարցման անցկացման մասին բուհը իր կայքով և սոցիալական հարթակների պաշտոնական էջերով զետեղում է հայտարարություն, իսկ դեկանատները հայտարարությունը զետեղելու հաջորդ օրը հարցման մասին բանավոր կերպով ծանուցում են ակադեմիական խմբերին:

13. Ուսանողական հարցումների ավարտից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը կազմում է հարցումների ընթացքի և ուսանողների մասնակցության վերաբերյալ հաշվետվություն:

14. Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը լրացված հարցաթերթերի հիման վրա ստեղծում և մշակում է տվյալների բազա:

15. Տվյալների բազան և ուսանողական հարցման արդյունքների վերլուծությունները տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից ներկայացվում են որակի ապահովման բաժին: Որակի ապահովման բաժինը տվյալները ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում կազմում է ուսանողական

հարցման արդյունքներն ամփոփող հաշվետվություններ, որոնք ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

16. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը ամբիոններին է տրամադրում տվյալ ամբիոնի դասընթացների իրականացման գնահատման արդյունքների հիման վրա կազմված հաշվետվությունը:

17. Ամբիոնների վարիչները ուսանողական հարցման արդյունքները քննարկում են ամբիոնի նիստի ընթացքում՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին ներկայացնելով քննարկման արդյունքները և ամբիոնի գործունեության բարելավման ուղղությունները:

18. Հարցման ամփոփ արդյունքները տեղ են գտնում ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ:

19. Դասընթացի իրականացման գնահատման նպատակով անցկացվող ուսանողական հարցումների արդյունքներն օգտագործվում են համալսարանի ղեկավարության, որակի ապահովման բաժնի, ամբիոնների և ըստ անհրաժեշտության՝ կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից որոշումներ կայացնելիս, ամփոփ վերուծություններ իրականացնելիս, դասընթացների ծրագրերի բարելավման, դասավանդման, ուսումնառության և գիտելիքի գնահատման մեթոդների ու մոտեցումների հստակեցման և կատարելագործման, ներքին և արտաքին շահակիցներին հաշվետվողականության և այլ նպատակներով:

Հավելված N 1

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ (ԴԱՍԱԽՈՍ/ՍԵՄԻՆԱՐԱՎԱՐ)

Հարգելի՛ ուսանող,

Սույն հարցման նպատակն է գնահատել դասընթացի դասավանդումը, ուսումնառությունը և գիտելիքի գնահատումը: Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ հարցաթերթը լրացնելու համար:

Հարցաթերթում պատասխանները նշել հետևյալ կերպ՝ ☒:

Ամբիոն/Ֆակուլտետ՝

Մասնագիտություն/Մասնագիտացում՝

Կրթական աստիճան՝ ☐ Բակալավր ☐ Մագիստրոս Ուսումնառության տարի՝ ☐ 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4

Դասընթաց՝

Դասախոս՝

Խնդրում ենք գնահատել դասընթացի իրականացումը 1-ից 4 միավորանոց սանդղակով՝ աճման կարգով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 4-ը՝ առավելագույն:

| Բաժին 1: **ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ** | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. Դասընթացի ծրագիրը (բովանդակություն, ուսումնառական վերջնարդյունքները, գիտելիքի գնահատման չափանիշները) մանրակրկիտ կերպով ներկայացվել է: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Դասընթացի յուրացման համար նախատեսված ժամաքանակը, թեմաները, տրամադրված նյութի ծավալը, տարատեսակ հանձնարարությունները նպաստել են դասընթացի ամբողջական յուրացմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. Ուսանողների ընթացիկ ակտիվության գնահատման սկզբունքները և գնահատման վրա ազդող գործոնները ներկայացվել են սեմինար պարապմունքների սկզբում: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4. Դասախոսը/սեմինարավարը տեղեկացրել է ակադեմիական անբավարար առաջադիմության հետևանքների մասին: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 5. Դասընթացի թեմաները կամ դասախոսության նյութը կրկնել են նախկինում ուսումնառած այլ դասընթացների բովանդակությունը: | այո | ☐ | ոչ | ☐ |
| 6. Եթե այո, ապա նշեք այդ դասընթացների անվանումները: | | | | |

| Բաժին 2: **ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ** | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. Դասընթացը մատուցվել է հասկանալի կերպով և շեշտադրվել են առարկայի առանցքային հատվածները/եզրույթները: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Դասախոսին հաջողվել է դասընթացում քննարկվող հարցերի շրջանակի (ուսումնասիրության ոլորտի) նկատմամբ հետաքրքրություն առաջացնել: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. | Դասախոսը կազմակերպել/խրախուսել է ինքնուրույն/խմբային հետազոտական աշխատանք կատարելը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4. | Դասընթացի ամբողջական նյութը նախապես ներբեռնված է եղել Moodle համակարգ: | այո | ☐ | ոչ | ☐ |
| 5. | Դասընթացի համար տրամադրած ուսումնառության նյութերը արդիական են և բազմաղբյուրային: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 6. | Դասընթացի համար տրամադրած ուսումնառության նյութերը եղել են բավարար դրա լիարժեք յուրացման համար: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 7. | Դասախոսը կիրառել է հետևյալ մեթոդները՝ խմբային աշխատանք, քննարկումներ, օրինակի (քեյսերի) վերլուծություն և այլն: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 8. | Դասախոսը պատրաստակամորեն և լիարժեք կերպով մեկնաբանել է ուսանողների հարցերը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 9. | Դասընթացի գործնական հատվածը նպաստել է տեսական նյութի լիարժեք յուրացմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 10. | Դասախոսը/սեմինարավարը մեկնաբանել է կատարված հանձնարարությունները և դրանց գնահատումը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 11. | Սեմինար պարապմունքների ընթացքում խրախուսվել է ուսանողների վերլուծելու, ինքնուրույն դատողություններ անելու ունակությունը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 12. | Դասախոսի/սեմինարավարի կողմից կատարված գնահատումն իրականացվել է անաչառ կերպով: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

## Բաժին 3: **ԱՄՓՈՓՈՒՄ**

1. Այս դասընթացը որքանո՞վ է նպաստում մասնագիտության վերջնարդյունքների ձեռքբերմանը:

   ☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

2. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք դասախոսին:

   ☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

Խնդրում ենք նշել դասընթացի իրականացմանն առնչվող առավելությունները և թերությունները:

Շնորհակալություն:

Հավելված N 2

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ (ԴԱՍԱԽՈՍ)

Հարգելի՛ ուսանող,

Սույն հարցման նպատակն է գնահատել դասընթացի դասավանդումը, ուսումնառությունը և գիտելիքի գնահատումը: Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ հարցաթերթը լրացնելու համար:

Հարցաթերթում պատասխանները նշել հետևյալ կերպ՝ ☒:

Ամբիոն/Ֆակուլտետ՝

Մասնագիտություն/Մասնագիտացում՝

Կրթական աստիճան՝ ☐ Բակալավր ☐ Մագիստրոս Ուսումնառության տարի՝ ☐ 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4

Դասընթաց՝

Դասախոս՝

Խնդրում ենք գնահատել դասընթացի իրականացումը 1-ից 4 միավորանոց սանդղակով՝ աճման կարգով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 4-ը՝ առավելագույն:

| Բաժին 1: **ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ** | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. Դասընթացի ծրագիրը (բովանդակություն, ուսումնառական վերջնարդյունքները, գիտելիքի գնահատման չափանիշները) մանրակրկիտ կերպով ներկայացվել է: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Դասընթացի յուրացման համար նախատեսված ժամաքանակը, թեմաները, տրամադրված նյութի ծավալը, տարատեսակ հանձնարարությունները նպաստել են դասընթացի ամբողջական յուրացմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. Դասընթացի թեմաները կամ դասախոսության նյութը կրկնել են նախկինում ուսումնառած այլ դասընթացների բովանդակությունը: | այո | ☐ | ոչ | ☐ |
| 4. Եթե այո, ապա նշեք այդ դասընթացների անվանումները: | | | | |

| Բաժին 2: **ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ** | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. Դասընթացը մատուցվել է հասկանալի կերպով և շեշտադրվել են առարկայի առանցքային հատվածները/եզրույթները: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Դասախոսին հաջողվել է դասընթացում քննարկվող հարցերի շրջանակի (ուսումնասիրության ոլորտի) նկատմամբ հետաքրքրություն առաջացնել: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. Դասախոսը կազմակերպել/խրախուսել է ինքնուրույն/խմբային հետազոտական աշխատանք կատարելը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4. Դասընթացի ամբողջական նյութը նախապես ներբեռնված է եղել Moodle համակարգ: | այո | ☐ | ոչ | ☐ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Դասընթացի համար տրամադրած ուսումնառության նյութերը արդիական են և բազմաղբյուրային: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 6. | Դասընթացի համար տրամադրած ուսումնառության նյութերը եղել են բավարար դրա լիարժեք յուրացման համար: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 7. | Դասընթացի ընթացքում դասախոսի կողմից պարբերաբար իրականացվել են քննարկումներ, օրինակի (քեյսերի) վերլուծություններ և վերջնական ամփոփում: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 8. | Դասախոսը պատրաստակամորեն և լիարժեք կերպով մեկնաբանել է ուսանողների հարցերը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

## Բաժին 3: **ԱՄՓՈՓՈՒՄ**

1. Այս դասընթացը որքանո՞վ է նպաստում մասնագիտության վերջնարդյունքների ձեռքբերմանը:
   ☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

2. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք դասախոսին:
   ☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

Խնդրում ենք նշել դասընթացի իրականացմանն առնչվող առավելությունները և թերությունները:

Շնորհակալություն:

Հավելված N 3

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ (ՍԵՄԻՆԱՐԱՎԱՐ)

Հարգելի՛ ուսանող,

Սույն հարցման նպատակն է գնահատել դասընթացի դասավանդումը, ուսումնառությունը և գիտելիքի գնահատումը: Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ հարցաթերթը լրացնելու համար:

Հարցաթերթում պատասխանները նշել հետևյալ կերպ՝ ☒:

Ամբիոն/Ֆակուլտետ՝

Մասնագիտություն/Մասնագիտացում՝

Կրթական աստիճան՝ ☐ Բակալավր ☐ Մագիստրոս Ուսումնառության տարի՝ ☐ 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4

Դասընթաց՝

Սեմինարավար՝

Խնդրում ենք գնահատել դասընթացի իրականացումը 1-ից 4 միավորանոց սանդղակով՝ աճման կարգով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 4-ը՝ առավելագույն:

| Բաժին 1: **ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ** | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. Ուսանողների ընթացիկ ակտիվության գնահատման սկզբունքները և գնահատման վրա ազդող այլ գործոնները ներկայացվել են սեմինար պարապմունքների սկզբում: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Սեմինարավարը տեղեկացրել է ակադեմիական անբավարար առաջադիմության հետևանքների մասին: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. Անհատական աշխատանքի պայմանները ներկայացվել են մանրակրկիտ ձևով (եթե տվյալ առարկան անհատական աշխատանք չի նախատեսում, բաց թողնել այս կետը): | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4. Ուսումնական ծրագրի յուրացման համար նախատեսված գործնական դասերի ժամաքանակը, նյութի ծավալը, տարատեսակ հանձնարարությունները նպաստել են դասընթացի ամբողջական յուրացմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| Բաժին 2: **ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ** | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. Սեմինարավարը կիրառել է հետևյալ մեթոդները՝ խմբային աշխատանք, քննարկումներ, օրինակի (քեյսերի) վերլուծություն և այլն: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Սեմինարավարը պատրաստակամորեն և լիարժեք կերպով պատասխանել է ուսանողների հարցերին: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. Սեմինարավարին հաջողվել է ինձ մոտ հետաքրքրություն առաջացնել դասընթացում քննարկվող հարցերի շրջանակի (ուսումնասիրության ոլորտի) նկատմամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | Դասընթացի գործնական հատվածը նպաստել է տեսական նյութի լիարժեք յուրացմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 5. | Սեմինարավարը մեկնաբանել է կատարված հանձնարարությունները և դրանց գնահատումը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 6. | Սեմինարավարի կողմից կատարված գնահատումն իրականացվել է անաչառ կերպով: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

## Բաժին 3: **ԱՄՓՈՓՈՒՄ**

1. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք սեմինարավարին:

☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

Խնդրում ենք նշել դասընթացի իրականացմանն առնչվող առավելությունները և թերությունները:

Շնորհակալություն:

Հավելված N 4

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող,

Սույն հարցման նպատակն է գնահատել ավարտական աշխատանքի կատարման ընթացքը և պաշտպանությունը: Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ հարցաթերթը լրացնելու համար:

Հարցաթերթում պատասխանները նշել հետևյալ կերպ՝ ☒:

Ամբիոն/Ֆակուլտետ՝
Մասնագիտություն՝
Ղեկավար՝

Խնդրում ենք գնահատել ավարտական աշխատանքի կատարման ընթացքը և պաշտպանությունը 1-ից 4 միավորանոց սանդղակով՝ աճման կարգով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 4-ը՝ առավելագույն:

### Բաժին 1: ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1. «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումները»՝

   ☐ Ինձ տրամադրվել է ղեկավարի կողմից
   ☐ Ներբեռնել եմ ՀՊՏՀ կայքից ինքնուրույն
   ☐ Տեղյակ չեմ եղել տվյալ մեթոդական ցուցումների մասին

2. Ավարտական աշխատանքի վրա սկսել եմ աշխատել

   ☐ Առաջին կիսամյակից
   ☐ Փորձառության ընթացքում
   ☐ Սահմանված ժամկետից 1-2 ամիս առաջ

| Բաժին 2: ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄ | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումները» նպաստել են աշխատանքի պատշաճ կատարմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Ավարտական աշխատանքի կատարման համար տրամադրվել է արդի գրականություն: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում ղեկավարն ուղղորդել է հետազոտության մեթոդների և վիճակագրական աղբյուրների ընտրության հարցերում: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4. | Աշխատանքի բովանդակության և կառուցվածքի մշակումն իրականացվել է ղեկավարի անմիջական վերահսկողության ներքո: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 5. | Ավարտական աշխատանքի կատարման ժամանակացույցը սահմանվել է ղեկավարի կողմից: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 6. | Ավարտական աշխատանքը գրելու ընթացքում ղեկավարի հետ հանդիպումները և տրամադրվող խորհրդատվությունը եղել են բավարար քանակի: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 7. | Տվյալների հավաքագրումը, աղյուսակների և գծապատկերների կազմումն իրականացվել է ղեկավարի աջակցությամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 8. | Ղեկավարը մանրակրկտորեն ուսումնասիրել է կատարված աշխատանքը, կատարել անհրաժեշտ շտկումները և ուղղորդել կամ մատնանշել է շտկման ենթակա թերությունները: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 9. | Ամփոփիչ ատեստավորման ելույթը նախապատրաստելուց առաջ ղեկավարը տրամադրել է աջակցություն: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| Բաժին 3: **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ** | | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ավարտական աշխատանքը նպաստել է որակավորման վերջնարդյունքների ձեռքբերմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. | Փորձառությունը օժանդակել է ավարտական աշխատանքի բովանդակության մշակմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3. | Ավարտական աշխատանքի թեմայի ընտրությունը կատարվել է ամբիոնի խորհրդատվությամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

## Բաժին 4: **ԱՄՓՈՓՈՒՄ**

1. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս եք գնահատում ամբիոնի հետ աշխատանքը:
   ☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

2. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք ղեկավարի հետ Ձեր համագործակցությունը:
   ☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

3. Նպաստել է արդյո՞ք ավարտական աշխատանքի կատարումը հետագա մասնագիտական կողմնորոշման հարցում:
   ☐ Ոչ ☐ Ավելի շատ ոչ, քան այո ☐ Ավելի շատ այո, քան ոչ ☐ Այո

4. Կազմակերպվել է արդյո՞ք ավարտական աշխատանքի նախապաշտպանություն:
   ☐ Այո ☐ Ոչ

Խնդրում ենք նշել ավարտական աշխատանքի իրականացմանն առնչվող առավելությունները և թերությունները:

Շնորհակալություն:

Հավելված N 5

## ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող,

Սույն հարցման նպատակն է գնահատել մագիստրոսական թեզի կատարման ընթացքը և պաշտպանությունը: Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ հարցաթերթը լրացնելու համար:

Հարցաթերթում պատասխանները նշել հետևյալ կերպ՝ ☒:

Ամբիոն/Ֆակուլտետ՝
Մասնագիտություն ՝
Ղեկավար՝

Խնդրում ենք գնահատել մագիստրոսական թեզի կատարման ընթացքը և պաշտպանությունը 1-ից 4 միավորանոց սանդղակով՝ աճման կարգով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 4-ը՝ առավելագույն:

### Բաժին 1: ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1. «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումները»՝

   ☐ Ինձ տրամադրվել է ղեկավարի կողմից
   ☐ Ներբեռնել եմ ՀՊՏՀ կայքից ինքնուրույն
   ☐ Տեղյակ չեմ եղել տվյալ մեթոդական ցուցումների մասին

2. Մագիստրոսական թեզի վրա սկսել եմ աշխատել

   ☐ Առաջին կիսամյակից
   ☐ Փորձառության ընթացքում
   ☐ Սահմանված ժամկետից 1-2 ամիս առաջ

| Բաժին 2: ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՈՒՄ | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1. «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումները» նպաստել են աշխատանքի պատշաճ կատարմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. Մագիստրոսական թեզի կատարման ժամանակացույցը և պաշտպանության վերջնաժամկետը որոշվել է ղեկավարի ուղղորդմամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Մագիստրոսական թեզի թեմային առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրությունը և ընտրությունը կատարվել է ղեկավարի ուղղորդմամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4. | Աշխատանքի բովանդակության (պլանի) և կառուցվածքի մշակումն իրականացվել է ղեկավարի անմիջական վերահսկողությամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 5. | Մագիստրոսական թեզի նպատակը և դրան հասնելու ուղիները, ինչպես նաև լուծման ենթակա խնդիրները, առարկայի և օբյեկտի սահմանումը իրականացվել են ղեկավարի աջակցությամբ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 6. | Հետազոտության ընտրված մեթոդները մշակվել են ղեկավարի հետ համատեղ: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 7. | Ղեկավարը կատարել է անհրաժեշտ շտկումները և ուղղորդել կամ մատնանշել է աշխատանքում շտկման ենթակա թերությունները: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 8. | Մագիստրոսական թեզը գրելու ընթացքում ղեկավարի հետ հանդիպումները և տրամադրվող խորհրդատվությունը եղել է բավարար քանակի: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 9. | Ամփոփիչ ատեստավորման ելույթը նախապատրաստելուց առաջ ղեկավարը տրամադրել է խորհրդատվություն: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| Բաժին 3: **ԱՄՓՈՓՈՒՄ** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մագիստրոսական թեզը նպաստել է որակավորման վերջնարդյունքների ձեռքբերմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2. | Փորձառությունը օժանդակել է մագիստրոսական թեզի բովանդակության մշակմանը: | ☐ | ☐ | ☐ | ☐ |

3. Մագիստրոսական թեզի թեման առաջարկվել է:

☐ Ուսանողի կողմից ☐ Ամբիոնի կողմից

4. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս եք գնահատում ամբիոնի հետ աշխատանքը:

☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

5. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք ղեկավարի հետ Ձեր համագործակցությունը:

☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

6. Նպաստել է արդյո՞ք մագիտրոսական թեզի կատարումը հետագա մասնագիտական կողմնորոշման հարցում:

☐ Ոչ ☐ Ավելի շատ ոչ, քան այո ☐ Ավելի շատ այո, քան ոչ ☐ Այո

7. Կազմակերպվել է արդյո՞ք մագիտրոսական թեզի նախապաշտպանություն:

☐ Այո ☐ Ոչ

Խնդրում ենք նշել ավարտական աշխատանքի իրականացմանն առնչվող առավելությունները և թերությունները:

Շնորհակալություն: